



Պատասխանատու
գովհանեա փրիմեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՈՅ

Նամակըն ուղղելի էն
առ. Ղ. Գ. Պալագարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՄԱՐՏ ԵՐ ԵՐ ԶԱՐԻ

ԶՄԻՌՆԻՈՅ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1879

ԹԻՒ 1130

ԱԶԳԱՅԻՆ

Ինչպէս որ ծանուցած էինք Արշալուսի նա-
խնի թագ թուով, վսեմափայլ Տիրան էֆէնտի
թագ թագեանի և ազնուազարմօրիորդ Զարու-
նի Բ. Եղևուֆեանի հարսանեաց հանդէսը տեղի
ունեցաւ, ամսոյս 15ին, երկուշաբթի գիշեր ի
Պառնապատ մեծաշուք Եղևուֆեան թովսէփ
Չէլէպիի ապարանքը :

Սուրբ պսակի և առաքաւորի օրհնութեան ա-
րարողութիւնը կատարեց Զմիւռնիոյ սրբազան
Առաջնորդ գերա. Մելքիսեդեկ եպիսկոպոս
Մուրատեանց Ն. Սրբազնութեան կընկերակցէր
նաև փոխ-առաջնորդ արծա. Մակար վարդա-
պետ, Նոյնպէս քահանայից գարս :

Նուիրական արարողութեան միջոցին, ամուս-
նական լծակցութեան վկայ կընկերայանալով վսե-
մարդիս էֆէնտի Համամեան, որ յատկապէս
հոս եկած էր մայրաքաղաքէն :

Յաւարտ կրօնական արարողութեան պարա-
հանդէսը կընկեր մեծ շքեղութեամբ, որոյ փայլ
կուտային, իրենց ներկայութեամբ, ըստ կարգի
նշանակեալ բարձրագիւր անձինք, այսինքն նա-
հանգ իս ընդհանուր կառավարիչ վսեմա. Համա-
մաշա, ոստիկանութեան գլխաւոր Եսայի Պէյ,
բոլոր ժողովոյ նախագահ և կառավարութիւնն
անձնաւորող ուրիշ պաշտօնեայք, եւրոպական
ևս տէրութեանց ներկայացուցիչք, զանազան
ազգերէ երևելի սեղանաւորք, վաճառականք
ևայլն :

Յիծառմբ ու անհուն գոհունակութիւնք ան-
բայտ իկ կերպով կըթաղաւորէ :

Այսպէս քանի մը ժամ շարունակելէ ետե-
հանգէր կ'աւարտէ : Զերմագին շնորհակալու-
թիւնք և սրտագին բարամաղթութիւնք կըլլան
ամենաւն կողմանէ առ ազնուազարմ լծակցիս և
առ ընտանիս նոցա, յետոյ կըմնին հանդիսա-
կանք, ձեռնաւոր կառավարութեամբ, ցընծութեան
անձինք զիշատակօք ի ըլլալին յայտնելով :

Երէկ (12 Հոկտ.) կըսէ Թէրէֆաշէ Էֆէնտի, Ա-
մենապատիւ Ներսէս Ս. Պատրիարքը նոր պաշ-
տօնէութիւնը շնորհաւորելու երթալով, ազգա-
յին ուսման գործոց վարձան գանկուն համար
թէ Առաջին Նախարարին և թէ միւս նախարա-
րաց ուշադրութիւնը խնդրեց և Նորին կայսե-
րական վեհափառութեան գութն ու կարեկ-
ցութիւնը հայցեց :

Նախարարք մեծ յոյսեր և խոստումներ տը-
ւին, որ ազգին բարեաց և երջանկութեան և
Ձէյթունի խնդրոյն լուծման համար աշխատին,
կըյուսամք թէ, այսուհետեւ բարեգութ կայ-
սեր շնորհիւ և նոր նախարարաց ջանքը ազգին
երջանիկ օրերը կըվերադառնան :

—Խառն ժողովոյ օրոշմամբ Տիգրանեան գեր-
միրտիչ եպիսկոպոս Պաշտօնատի առաջնորդ, Նա-
խանեան արծա. Պօղոս վարդապետ Սղերդի ա-
ռաջնորդական տեղապահ կարգուէր են, և
արծ. Վահան վարդապետ ի Կ. Պօլիս կանչելու
հրաման տրուէր է :

—Անգլիոյ դեսպան Սըր Լէյքըտ իր վերջին
ճամբորդութեան միջոցին ի Ս. Երուսաղէմ ալ
ուխտի երթալով, տեղւոյն Պատրիարք Ամենա-
նայի սրբազանի և այլոց հոգեւորականաց հետ
ևս տեսակցէր է : Դեսպանը խիստ մեծ շնոր-
հակալութիւն յայտնէր է թէ Նորին Սրբազնու-
թիւն Եսայի Պատրիարքի և թէ ճամբորդու-
թեան միջոցին մեր ազգին կողմանէ գտած յար-
գանաց և մեծարանաց մասին :

—Գարսէն առնուած տեղեկութեանց նայե-
լով, Ռուսիոյ կառավարութիւնը արգիլէր է, որ
Տաճկաստանի երկիրներու սահմանակից տեղե-
րէն Հայք երկիր չգնեն, և մինակ Ռուսաց և
տեղացի Ռուսաց և ուրիշ երկիրներէ գաղթող
ժողովրդոց հրաման տուէր է երկիր գնելու :

Հայք արանջալով Ռուսիոյ կառավարութեան
սոյն անվայել ընթացքին դէմ, 20 000 հոգւոյ
շափ Տաճկաստան գաղթելու պատրաստուելու
վրայ են եղեր :

—Անցեալ շաբաթ օր Ամենա. Ներսէս սրբա-
զան Պատրիարք չոր անուան տանն ըլլալով ազ-
գային ամեն կարգի ժողովուրդներէն երևելի
անձինք, և դեսպանատանց կողմանէ ևս թարգ-
մանք պատրիարքարան գալով շնորհաւորէր են
Նորին Սրբազնութիւնը :

Նոյնպէս Առաջին Նախարարին և Արդարու-
թեան գործոց պաշտօնէին կողմանէ՝ յատուկ
պաշտօնեաներ զրկուէր են նոյն օրն ի Պատրի-
արքարան, ի շնորհաւորութիւն Ն. Սրբազնութե-
ան :

—Պատրիարք Հայրը, քանի մը ատենէ ի վեր
թղթակցութիւն ընելով Սեփակի վկայ Ապետին
փաշայի հետ, շատ բաներ յանձնարարած է Ն.
Վսեմութեան նաև հրաւիրէր է որ գարոյներու
վրայ ուշադրութիւն ընելով օգնէ անոնց յա-
ռաջագիւծութեան :

Երէկալ գրուածին նայելով, տեղւոյն առաջ-
նորդը սահմանադրապէս չէ ձեռնարկած ժողո-
վոց կազմութեան, այլ իր քմայ համեմատ, ո-
րով գանդաւաններ կըլլան այս մասին :

Սոյն լուրք տուողը կըյաւելու նաև որ, եթէ
Սենքերիմեան ընկերութիւնը տեղւոյն գարոց-
ներուն չնայի, երեսի վրայ պիտի մնան գարոցք
վսեմի Ուսումնական խորհուրդ չգտնուելուն
համար միայն յիշեալ ընկերութեան շնորհիւ
կըկառավարուին :

—Դերա. Խորէն սրբազան Նար-Պէյ Լուսին-
եան Հեկտ. 16ին ի. Պօլիս մեկնէր է Պաշտօնա-
տան և Բուսնիստ երթալու համար : Պիտի այ-
ցելէ նաև Մաճարիսի մանի և Աւստրիոյ Հայոց և
մինչև Մանչէսթը պիտի հասնի, որով 4—5 ա-
միս պիտի տեւէ սոյն ճամբորդութիւնը :

—Տրապիզոնէն կըգրեն թէ, Ամենապատիւ
Խորմեան սրբազան Հեկտ. 7ին Էրզրում երթա-
լու համար մեկնէր է անտի : Տեղւոյն ազգա-
յինք մեծ յարգանք մատուցէր են Ն. Սրբազ-
նութեան և Էրզրում մեկնած միջոցին նշանա-
ւոր անձանցմէ 20—25 հոգի ձիերով Չէֆամու
շափ ուղեկցէր են Նորին Սրբազնութեան :

Նորին Սրբազնութիւնը ուղած տեղէն քովը
Զապիթի առնելու համար նահանգին կառա-
վարութեան հրամանագիր մը ընդունէր է :

—Հալէպէն Մալիէ-Էր քաղաքին Հոկ. 24 (Ն. Տ.)
հասած հեռագրի մը նայելով, Սայիտ փաշա և
Նուրեան էֆէնտի 15 օրէ ի վեր Ձէյթուն գըտ-
նուելով, տեղական գործոց գեղարարութիւնե-
րը լուծելու զբաղած են, այսինքն տուրքերը
ըստ օրինի կարգադրելով՝ կանոնաւոր վարչու-
թիւն մը կըհաստատեն, և վերջին անցից պատ-
ճառաւ տեղի ունեցած միասնեան ու գէշու-
թիւնները անհետ կ'ընեն : Ասոնք արդարու-
թեամբ և անպառնելեամբ վարուելով՝ ժողո-
վրդեան վրայ լաւ ազդեցութիւն ունեցան, ո-
րով նորա հաւատարմութիւնն ու վստահութիւ-
նը գրաւեցին : Տասը սպարապետներ Սայիտ փա-
շայի անձնատուր ըլլալով՝ զէնքերն յանձնե-
ցին : Մնացեալք ևս այս օրինակին պիտի հետե-
ւին : Երկիրը կատարեալ խաղաղութեան մէջ է :

Ձէյթունէն ևս Սեպտ. 24 թուով հետագայ
լուրք հասած է :

«Սայիտ փաշա և Նուրեան էֆէնտի, ինը օր
Մարաշ կենալէ ետեւ, Սեպտ. 10ին Ձէյթուն

հասան : Սիտի կաթողիկոս վեհափառ Մկրտիչ
սրբազան և Անգլիոյ կողմէ Մ. Զերմայտ և սորա
թարգման Մուրատեան Յարութիւն էֆ. Ձէյ-
թունի Ս. Աստուածածին վանքն իջևանեցան :
Սակայն գամիսէրք և հաղարապետ Պրիքու նոր
զօրանոցը կըկենան : Մեծ մեծ խոստումներ
կան : Բայց ամեն ինչ ապագային պիտի յայտ-
նուի : Ձէյթունցիք՝ Զաքըրեան Աւագ և Գլաւ-
ուտեան կարապետ էֆէնտիները երեսփոխան
ընտրելով՝ ասոնք պիտի խոսակցին գամիսէրնե-
րու հետ ժողովրդեան կողմանէ : Սայիտ փաշա
Ձէյթունի բանաւարկելոց համար ընդհանուր նե-
րողութիւն խնդրած է, սակայն դեռ պատաս-
խան առած չէ Բ. Դրնէն :

—Սեպտ. 20 թուականաւ Մոսկուայէն գըը-
ռուած նամակի մը նայելով, Սեպտ. 14ին վերաց-
ման Ս. Խաչի տօնախմբութեան օրը թէ Բէթ-
րապուրի և թէ Մոսկուայէ մէջ, Լազարեան
անուանի գերդաստանին 1779 տարւոյն հիմնա-
նակեցեաց և գարոցին հարկւումայ տարե-
դարձին տօնախմբութիւնը կատարէր են մեծ
հանգիսիս : Էրզրումի մէջ երկրագործական
գարոց մը հիմնելու նպատակաւ ստակ հաւա-
քելու համար Մոսկուա գտնուող Կ. Պօլսեցի
արծա. Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեան ալ
պատարագ մատուցէր և ազգու քարոզ մը տը-
ւէր է : Սոյն հոգեւոր հանգէսէն ետեւ Լազար-
եան ճեմարանի դահլիճին մէջ 50—60 անձանց
խնձոյք մը տրուէր է, ուր ներկայ գտնուէր են
յիշեալ քաղքին երևելի ազգայինք, և անդ-
բաժակներ պարպուէր են ի կենան Ռուսիոյ կայ-
սեր, վեհա. Գէորգ կաթողիկոսին, Ամեն. Ներ-
սէս Պատրիարքին ևայլ երևելի անձանց, ներ-
կայեցող և մասնաւորապէս Լազարեան գերդա-
ստանի, Հալէպէն ծայրը մինչև երկինք կը-
հասնէր, այսպէս, նոյն օրը մեծ ուրախութե-
անցունելէ ետեւ շնորհակալութեամբ կըցրուէ-
րամբողք : Սա ալ շնորհամբ քնելու որ, սոյն
հանգիսին, ատեն, յիշեալ Ամբրոսիոս վարդա-
պետին հանգանակութեան տուամարին մէջ 1300
լուրի ոտորագրուէր են :

Հայրէփէն կարինէն զրկուած նամակէ մը հե-
տագայ տողերը կըբաղեմք :

« Երբք չորս շաբաթներէ հետե-
երջնկայէն առած նամակներս յուսալից և հըր-
ճուառութեամբ պարունակութեամբ կընեկայանան
աչքիս սիրտ ի խնդ- կըբաղաւորիմ կարգալ
ի նոսա թէ տեղւոյն նորենտիւր Առաջնորդ գե-
րապատիւ Դիմաքսեանի անդու ջանից և ազ-
գու յորդորներու շնորհիւ երջնկացին սկսած է:
մեծ քայլերառնուլ դէպ յառաջիմութեան
ասպարեզ, մոռնալով իւր նախկին ռիս ու ատե-
լութիւն, սիրտ սրտի տուած կըգործէ և կ'ա-
ջակցի նմա այն ձեռնարկութեանց մէջ՝ զորս
ժամանակն ու տեղական պէտքերը կըպահան-
ջեն : Արդարեւ խիստ զարմանօք դիտեցի իմ
հայրենակցաց այս անսովոր շարժումներն ու
ջանքեր, զորս չեն զլանար ի զարգացումն եր-
ջնկայի Հայ մանկաւոյն, չգիտեմ թէ սոքա գեր-
Առաջնորդին յորդորանաց արդիւնք են եթէ
ոչ յինքնանց զգացին և իմ հայրենակիցք թէ
չիք մեծ վատութիւն քան ապրիլ անտարբեր
այնպիսի մի-ժամանակի մէջ որոյ մէն մի վայր-
կեան սուշեն նախկին մէն մի տարիներէ աւե-
լի : Թէպէտ առաջինն աւելի հաւանական ըստ
իս, բայց որն ալ որ ըլլայ, արդարեւ գովեստից
արժաի է երջնկացւոյն սոյն ընթացք, և որչափ
աւելի, երբ յարատեւէ ինչոյն :

Ռախուլութեամբ կըլսէի թէ երջնկայէն մի
ժամ հեռաւորութիւն ունեցող Ներսէս Հայրա-

պետ անուն վանուց մէջ գիշերօթիկ վարժարանի մը հիմնարկութիւնը եղեր և թէ կահկարասիքն, թէ սշակերտելոց ամեն պէտքերը օրինաւորապէս պատրաստուելու վրայ ըլլալով ամսոյս շէնքն բացումը տեղի պիտի ունենայ եղեր թեմական գիւղերու 30 աշակերտներով՝ որոց շատերու թոշակն իրենց ծնողքներէն, իսկ աղքատ մի քանիներուն ալ բարերարներու կողմէն պիտի հոգացուին :

Խնդրութեամբ կըլսէի թէ երդնկայի 4 վարժարանաց երեքը նախակրթարանի իսկ մին կանոնաւոր ուսումնարանի մը վերածելու ջանքեր ալ կըլինին եղեր այս օրերս : զայնս միշտ բարեկարգ և արդիւնաւէտ վիճակի մը մէջ պահելու պայմաններով և 4 թաղեցւոց անբաժան միութեամբ ջանքեր խիստ մեծ ըլլալուն յաջողութիւնը կերպաւորեն :

Բերկրանօք կըլսէի թէ երդնկայի նոր երկտասարդութիւն մ'ալ Ուսումնասիրաց անուն ընկերութեան մը ցանկալի դրօշին տակ համախմբեալ բաւական ընդարձակութեամբ ազգային թատրոնի մը հիմնարկութիւնը ըրած և շէնքն աւարտելու համար տիւրէն գիշեր կաշկաւարնէղեր նոյն իսկ իրենք քար և աղիս կրելով :

Վերջապէս հրճուանօք կըլսէի թէ երդնկայի մէջ քաղաքէն փոքր ինչ հեռի խիստ ընդարձակ գերեզմանատուն մը շինուելէ յետոյ, եկեղեցեաց հրապարակին վրայ ալ հայկապա առաջնորդարանի հիմնարկութիւնը եղեր է և ընդ հուպ այս իսկ կաւարսի :

Այս բոլոր հանգանակութեամբ կատարուել է, երդնկայիք ամեն յօժարակամ մասնակցեր են ի նոյն : . . . »

Գերա. Խորէն սրբազան Նաւ—Պէյ հետեւեալ գիրն ուղղած է առ Ս. Պատրիարք Հայրն .

Պէյիկիմաշ, 13 Հոկտ. 1829

«Ամենա. Պատրիարք սրբազան Հայր, նախագահ ազգային կեդրա վարչ. Խառն ժողովոյ Բարձրապատիւ իշխան Լուի, որ տոհմային վաւերագրերու զօրութեամբ ընդունուած է ի կայսերական կառավարութենէ անտի Ռուսիոյ (ուր կըբնակի ի 1829 է հետէ) իրեւ սերունդ յուզիղ գծէ Լուսինեան թագաւորացն կիպրոսի, երուսաղէմայ և Հայաստանի, պատիւ ունեցաւ իւր պաշտօնագրովն որ ի 19 Հոկտ. 1878 առ Ձերդ բարձրանոր՝ Սրբազնութիւնն յայտարարել թէ ես և եղբարքն իմոսեւեալ եմք ի հօրեղբօրէ նորա յԱմբօր—Յովսէփ Նաւ—Պէյ իշխանէն Լուսինեան և թէ հետեւաբար ինքն կը համարուի մեծ հօրեղբայր մեր :

Նորուն Արքայական բարձրութիւնը իրեւ արդի գլուխ մեր ազգատոհմին, կըպահանջէ որ և ես ստանձնեմ իմ գերդաստանին բնիկ և պատմական Լուսինեան անունը, զոր ինքը և եղբարքս կըլրեն : Արդ ըստ որում միեւնոյն ազգատոհմի անդամաց կարելի չէ այլեայլ մականուն ու գործածել, և ըստ որում իմեւ անբունաբարելի իրաւունքս է իմ հարցս ժառանգութիւն թողած մականունն ի կիր առնուլ, հետեւաբար և ես կ'ստիպուիմ Լուսինեան հայրենի անունս ստանձնել այսուհետեւ :

Պատիւ ունիմ զայն որոշումն հաղորդել Ամեն. տէրութեանը ի գիտութիւն մնալով :

Ն. Ծ. ի Քրիստոս

Թորէն արքեպիսկոպոս Նաւ—Պէյ Լուսինեան

Բաղէշէն ալ ցաւալի հեռագիր մը հասած է ի Պատրիարքարան, կըսէ Հայրենի* ,

Քաղաքին մէջ ապահովութիւն չէ մնացած երբէք, կռիւ, ծեծկռուք, զարնել, վիրաւորել սովորական բաներ դարձած են : Երկու օր առաջ քաղաքէն կէս ժամ հեռի Հայ մը վիրաւորուել և ուրիշ մ'ալ սպանուել է : Հեռագիրը կըսէ թէ կեանքն անհասկնալի եղած է և եթէ այս վիճակը շարունակէ, Բաղէշի Հայք բոլորովին պիտի փճանան, զի սպանութեան զատ ապրուստ ալ չէ մնացած ապահովութիւն չըլլալով և ճամբայները յեղաղակներով լցուելով : այնպէս որ հարստահարութեանց հետ սով և յայցը պիտի տիրեն և ժողովուրդը բնաջինջ պիտի լինի : Ուստի Ս. Պատրիարք Հօր

գիտութեանը և ազգասիրութեանը ապաստանին և անմիջական դարման կըհայցեն :

Նորին Սրբազնութիւնը թագրիր գրեց՝ առ Բարձրագոյն Գլուխ :

Կրօնական ժողովը որոշել է որ Արարատեան, Կիլիկիեան, Գարոցաւորաց և այլ ընկերութեանց գաւառական գործակալներուն մէջ կրօնագիտութեան հովիւութիւնը տեղւոյն առաջնորդաց յանձնուի ինչպէս է Պօլսոյ վարժարանաց մէջ :

Կրօնական ժողովն իւր այս որոշումը յիշեալ ընկերութեանց գործակալ ժողովներուն հաղորդել է :

Նոյնպէս Արարատեան, Կիլիկիեան և Գարոցաւորաց ընկերութեանց օգտին և յառաջագիւմութեան համար Ս. Պատրիարք Հայրը վեհակաթողիկոսին հովանաւորութիւնը և պաշտպանութիւնը խնդրել է և յանձնարարել է որ այս ընկերութեանց նպաստելու համար ամէն կարելի միջոց ի գործ դրուին Ս. Կաթողիկոսին կողմանէ և յորդոր կարգայ նոյն իսկ Կաթողիկոսն Ռուսաստանի ազգայնոց՝ դրամական օգնութիւն ընձեռելու համար : (նշմ)

ԹԱԹԱՐ ԲԱԶԱՐԺԸՂԻ ՀԱՅՐ

Յիշիպէի մէջ հրատարակեալ Նաւ—Պէյ—Լուսինեան յաղագրի մէջ, տեղւոյն Հայոց կողմանէ վեհա. Ալէք. փառայի մատուցած ուղեբժին օրինակը արժանի կըհամարուի թարգմանելով ընթերցողաց ուշադրութեան յանձնել :

«Իշխան,

«Քաղաքին մէջ բնակող Հայ ժողովրդեան կողմանէ Ձեր վսեմութեան գաղութար շնորհաւորելով հանդերձ, մեր խորին շնորհակալութիւնը կըյայտենք այն ազատութեան և իրաւանց հաւատարմութեան համար, որ անխտիր և արդարութեամբ բաժնուած է Արեւելեան Րուսիայի զանազան ազգաց :

«Թաթար Բազարձըղի Հայերը՝ Պօլսոյ հայրենակիցներու կողմէ վայելած վեհանձնութեան և համակրութեան նկատմամբ, այսպիսի բնականօրէն ուրախութեան օր մը հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել պարտ կըհամարին :

«Քաղաքս Ձեր վսեմութեան կառավարութեանը քանակէն ի վեր, մեր վայելած սոյն ազատութեան և իրաւանց հաւատարմութեան յարգը այն ատեն աւելի սրտաբեկութեամբ կըգգանք երբ Հայաստանի մեր թշուառ եղբայրներու ընդ միշտ կրած հարստահարութեանց լուրը մեզ կըհասնի : Բայց աւաղ մեզ համար անգին համարուող այս օրս ցաւալի մտածութեւ պէտք է սեցնել, Ալէք. փառային վրայ սե վարագոյր մը քաշելով, մեր այնչափ ցնծութիւններն արտայայտենք այն ամենաքարին Աստուծոյ որ հաճեցաւ իր իրաւանց և արդարութեան պաշտպան Ձեր վսեմութիւնը երկրիս կառավարիչ դրել : Մինչև այսօր ձեր ընթացքն արդարութեան ընդ հուպ գտնուած է :

«Երանի թէ եւրոպայ ալ մեր սոյն բարօրութեան և Ձեր վսեմութեան իմաստուն կառավարութեան շնորհիւ մեր վայելած ապահովութեան տեղեակ լինելով համազուէր, և ուրիշ երկիրներու բնակչաց տրտման կացութեան գիտար և մեզ նման անոնց ինքնօրինութիւն մը շնորհելու բարեհաճել :

«Այն ատեն թաթար Բազարձըղի Հայ ժողովուրդը երկու կերպով, այսինքն թէ իւր և թէ թուրքոյ զանազան կողմերը գտնուող իր եղբարց բարօրութեան համար ինքզինքը բարեբաղդ կըհամարէր :

«Լիւրժի ուրախութեամբ և երախտագիտութեամբ մէկ սիրտ և մէկ բերան, «Եկեցէ իշխանն Ալէքսանդր Վոկոբրիտ», գոչելով գոհ կ'ըլլանք Բազարձըղ, 19 Հոկտ. 1879

(Սրբազնութիւնն)

Սրբազան առաջնորդին ուշադրութիւնը կըհրաւիրեմք հետագայ նամակին վրայ :

Նաղիլի, 13 Հոկտեմբեր 1879

. . . խմբագիր,

Այս օրերս Նաղիլիի Հայ ժողովրդեան մէջ կրօնի մասին տիրած ցաւալի կացութիւնը ընդ-

հանուր ազգիս խից՝ ըզովելու աստիճանին մէջ տեսնելով՝ պարտ անձին համարեցայ պատահական լրագրի գիւմել փոքր յօդուածով մը յուսալով որ Հայիտի զանաք անկիւն մը շնորհելու ներկայիս իրեւ կարեւոր նիւթ մը հրատարակութեան :

Երբ երկու շաբաթ յառա իզմիրէն հոս վերադարձայ ցաւ էր ինձ տեսնել որ իմ ազգակիցներս իմ հետ ունեցած ուրախ խոսակցութեան միջոցին տարբեր նիւթի վրայ չէին խօսէր : այլ միայն տեղւոյս եկեղեցւոյ և գաղութան մասին իրենց ունեցած այնչափ փափաքը յայտնել է և մերթ ընդ մերթ գրեցնելով զայնոց օտար վարժագետաց և քահանայից երեսէն կրած նեղութիւնները երկարօրէն պատմելէ ետեւ քննելով ամիսներէ ի վեր եկեղեցւոյս գոց լինելուն իրենց աղօթքէ զուրկ մնալուն և մեր եկեղեցւոյն օրհնալ քահանայի մը անվայել բարոյ և վարուց նկատմամբ գանգատներ կ'ընէին :

Հոս աւելորդ կըհամարեմ անբարոյականութեւ նկարագրելով մը ընցունել պատուական լրագրի գէջը, ըստորում ամեն իզմիրցի ազգայինք տեղեակ են այս մասին :

Իսկ ես խղճի մտօք միշտ կըյորդորէի ազգակիցներս որ չ'ըլլայ թէ այսպիսի անհիմն պատճառներով ազգային պատուոյն արատ մը բերեն :

Սակայն ասկէ քանի մը շաբաթ յառաջ երբ իզմիր կըգտնուէի, վերոյիշեալ ցաւալի գէջքերէն փոքր ի շատէ տեղեակ լինելով իրկոյն գեր. Ս. Առաջնորդին և ազգային վարչութեան և ժողովներու գիւմել, լայն տեսնելով որ նոքա մինչև այն ժամանակ յատուկ նամակով տրուած տեղեկութեանց վրայ լուռ մնացել և այսուհետեւ ալ որքան գրուի ի զուր և ապագիւն լինելը հասկնալով, և մանաւանդ վիճակաւ առանց քահանայի լքեալ ըլլալուն վրայ օտար ազգաց ծաղրաբանութիւններէն ձանձրացած դարձայ :

Այս վերջին օրերս կըտեսնեմ որ քաղաքակից ազգայիներէ ոմանք Այսօրի Միլիթարեան միաբանութեան գիւմել և ամանք ալ Առաջնորդին միջոցաւ պատուելիներ հրաւիրելու համար ստորագրութիւնը կըժողվուին, որով 4 կամ 500 ազգակիցներէս գատուելուս վրայ մեծ ցաւ ըլլալով ձեր յարգութեան կըգիւմեմ ինքերկով որ ի սէր ազգութեան ազգու խրատներ և յորդորներ հրատարակէք ներկայ զեղծումներն անհետացնելու համար :

Համբարձում Թ. Կարապետեան :

ՁՈՒԼՈՒ ԱԶԳԻՆ ՁԻՆՈՒՈՐ ԿԱՆ ՎԻՃԱԿՆ

Բարեյուսոյ Գլուխն հանդիսացեալ թատերական տեսարանի դարձեալ բովանդակ եւրոպոյ ուշադրութիւնը Նարոյէն Գի որդւոյն սրտառու ժառանգորդ գրաւեց Ձուլու ազգին վրայ, զոր ընկճելու համար երկայն ժամանակէ ի վեր կ'աշխատի Անգլիոյ քաղաքականացեալ զօրութիւնն : Ձուլուք ըստ ամենայնի բարբարոս ժողովուրդ մ'են : իրենց երկիրը կ'ընկնայ Հընգկային Ուլիսիոս արեւմտեան ափանցը վրայ : գրեթէ Մատակաւաք կըլըզին հարաւային սոհ. մանածայրի գիւմելը, և կըտարածի հարաւային կողմանէ Դուկղա գետին խառնուելէն՝ գէպ ի հիւսիս մինչև Տեւոկոյայ ծայր : գարուհոս և անտառային ըլլալով՝ ամենայնպէս է նիւթկաւոր պատերազմներու և դարսնակալութեանց բնակչաց թիւը 350,000 կըհամարուի : Մարդկանց մէջ կարողները պարտաւորեալն զինուորական կենաց պատասեկանութեան սկիզբէն մինչև ի մահ : երկուքէն սկսեալ մինչև 5 տարուան միջոցի մէջ, բովանդակ երկրին մէջ զըտնուած 14 տարուան հասած պատանեակ գունդ մը կըկազմուի : այս գունդս իրեն Բրաւա կամ զինուորական ամրոցը կըլինէ, հոն բնակութիւն հաստատելով : Գանի մը տարուան յետոյ նոր գունդը կըմիանայ նախընթաց հին գնդի մը հետ, զինուորական կըթուլիւն ամբողջացընելու համար : քանի մը ամրացաց կամ գնդից բաղմութիւնն՝ զինուորական բաւակ մը կըլաւ մեն : 1878ին տասուերկու բանակ ձևացած կ'այն և երկուք ալ ձևանալու վրայ : Իւրտեան չիւր բանակը կըկազմուի 33 վաշտերէ, և ամեն

Դ. Վերանորոգութիւնն առաքելական հաստատութեանց, որ պիտի վերցունէ այն ամեն եղծումները զորս սովորութիւնը մոցուցած է քիղեղեղոյ մէջ և որոց թոյլ չեն տար այժմ օրուան պահանջութիւնները :

